

**Նագելի ՀԱԿՈՐՅԱՆ**

*Երևանի պետական լեզվահասարակագիտական  
համալսարան*

**ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ, ԱՍԱԳՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՃՆԵՐԻ  
ԹԱՐԳՄԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄԸ  
ԱՆԳԼԵՐԵՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ**

Սույն հոդվածում փորձ է արվում նկարագրել դարձվածքների, առած-ասացվածքների կարևոր դերը լեզվում, վերջիններիս լեզվամշակութային արժեքը: Լեզվի այս բառամթերքը հաճախ թարգմանական դժվարություններ է առաջացնում թարգմանիչների մոտ, ինչը հանգեցնում է թիրախ լեզվի միավորների իմաստային խեղաթուրման: Առնչվելով այս խնդրին՝ փորձ է արվել ուսանողների մոտ զարգացնել համապատասխան թարգմանչական գիտելիքներ անգլերենի մասնագիտական դասընթացներում: Ուսումնական գործընթացում կիրառվող վարժությունները միտված են բարելավելու թարգմանական հմտությունները, ինչպես նաև հարստացնելու լեզուն ուսումնասիրողի բառապաշարը և զարգացնելու լեզվամշակութային գիտելիքները:

**Բանալի բառեր.** դարձվածային միավոր, առած-ասացվածք, լեզվակիր, լեզվամշակութային յուրահատկություն, հարանշանակային արժեք, ոճական երանգավորում, թարգմանական հնար, պարզեցում, համաբանություն, համարժեքություն

Ինչպես հայտնի է, դարձվածային միավորներն, ասացվածքները և առածները ցանկացած ժողովրդի մշակութային, պատմական առանձնահատկությունների լեզվական դրսևորումներն են, որոնք հարստացնում են ազգային լեզուն և պատկերավոր մտածողությունը: Մասնավորապես, դարձվածային միավորները «խոսքում պատրաստի վերարտադրվող կայուն արտահայտություններ են, որոնք բնութագրվում են բաղադրիչների մասնակի կամ լրիվ վերաիմաստավորմամբ» /Նագարյան, Բաղդասարյան, 2000: 363/, ասացվածքները՝ «խրատական բնույթի կայուն արտահայտություններ են, որոնք շարահյուսորեն կազմավորված են որպես պարզ կամ բարդ նախադասություններ: Ի տարբերություն առածների, որոնք գործածվում են փոխաբերական իմաստով, ասացվածքներն ունեն ուղղակի նշանակություն, թեև ունեն ընդհանրացված իմաստ և լայն մեկնաբանման հնարավորություն են ընձեռում» /Նագարյան, Բաղդասարյան, 2000: 263-277/:

Հայտնի է, որ դարձվածքները և առած-ասացվածքները գոյություն ունեն աշխարհի բոլոր լեզուներում: Վերջիններս գիտելիք են փոխանցում ոչ միայն լեզվի, այլև ազգային մտածելակերպի, մշակույթի և պատմական փորձի մասին:

Ուսումնասիրելով դարձվածային միավորները և առած-ասացվածքները՝ ակնհայտ է, որ տարբեր ժողովուրդներ կյանքի նկատմամբ ունեն շատ ընդհանրական գաղափարներ: Սակայն պետք է նշել, որ լեզուները նաև տարբերվում են իրենց ինքնատիպությամբ, որոնց վառ արտահայտություններն են հենց դարձվածքները և առած-ասացվածքները: Հետաքրքրական է ուսումնասիրել և համեմատել տարբեր լեզուների բառամթերքը և բացահայտել տարբեր պատկերներում առկայացած ընդհանրական գաղափարները, որոնք արտացոլում են այս կամ այն ժողովրդի լեզվամշակութային յուրահատկությունը:

Կարևոր է այն փաստը, որ յուրաքանչյուր լեզվում դարձվածքները կամ առած-ասացվածքները բառացի չեն կարող ընկալվել, եթե նույնիսկ հայտնի է յուրաքանչյուր բառի իմաստը և հասկանալի է քերականական կառուցվածքը: Բառացի թարգմանելիս իմաստը մնում է անհսկանալի և տարօրինակ:

Այսպիսով, դարձվածքների, առած-ասացվածքների թարգմանության դժվարությունները սկսվում են տեքստում՝ նրանց հայտնաբերման (ճանաչման) պահից: Թարգմանիչների համար կարևոր է հետևել թարգմանական որոշ կանոնների և եղանակների, որոնք հնարավոր կդարձնեն պահպանելու ոճական երանգավորումը, պատկերավորությունը, որը հատուկ է այս կամ այն լեզվակրի լեզվամտածողությանը: Հետևաբար, թարգմանիչը պետք է դիմի թարգմանական հիմնական հնարների կիրառմանը, պահպանելով թարգմանական սկզբունքները, որպեսզի թարգմանությունը ոչ միայն չտուժի, այլև հնչի բնագրին հավասար մակարդակով, ասել է թե՛ *պահպանել համարժեքությունը*: Դարձվածային միավորները, առածները և ասացվածքները թարգմանելիս առաջնային խնդիր պետք է լինի վերջիններիս հարանշանակային իմաստի պահպանումը, արտահայտչականության փոխանցումը: Հայտնի է, որ թարգմանության առանձնահատկությունների ուսումնասիրությունը ոճաբանության տեսանկյունից ուշագրավ է, քանի որ ցանկացած թարգմանության հաջողությունը մեծապես կախված է տվյալ համատեքստին և ոճին համապատասխան միավորների ճիշտ ընտրությունից:

Դասավանդելով բարձրագույն հաստատությունում, մասնավորապես, անգլերենի մասնագիտական բաժիններում՝ դասախոսը հաճախ է առնչվում ուսանողների կողմից դարձվածային միավորների, ասացվածքների և առածների սխալ թարգմանությունների հետ: Թարգմանական խնդիրները առաջանում են այն պատճառով, որ ուսանողներն անտեղյակ են թարգմանական կանոններից և եղանակներից, որոնք անհրաժեշտ են իմանալ այս կամ այն դարձվածքը կամ ասացվածքը թարգմանելիս: Շատ հաճախ կատարվում է *բառացի թարգմանություն*, որն աղավաղում է աղբյուր լեզվի լեզվակրի ազգային մտածելակերպը:

Այսպիսով, մասնագիտական դասընթացներին առնչվելով այս խնդրին և նպատակ հետապնդելով ուսանողների մոտ զարգացնելու

համապատասխան թարգմանչական գիտելիքներ և հմտություններ՝ Ն.Հարությունյանի հետ համահեղինակությամբ պատրաստել ենք “Let’s Translate” ուսումնական ձեռնարկը /Harutyunyan, Hakobyan, 2006/, որը միտված է օգնելու ուսանողներին՝ բացահայտելու ժամանակակից թարգմանության տեսության հիմնական սկզբունքները և հասկացությունները, թարգմանական խնդիրների լուծման հնարավոր ուղիները:

Ձեռնարկը նախատեսված է ինչպես բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների, մագիստրոսների, ասպիրանտների համար, այնպես էլ բոլոր նրանց, ովքեր ցանկանում են կատարելագործել իրենց անգլերեն լեզվի գիտելիքները:

Ձեռնարկը բաղկացած է երեք գլուխներից, որոնք անդրադառնում են տարբեր լեզվական կառույցների և բառային միավորների թարգմանական խնդիրներին: Ձեռնարկի յուրաքանչյուր բաժնի տեսական, բացատրական հատվածին հաջորդում են տարբեր թարգմանչական վարժություններ, որոնց նպատակն է առավել մատչելի դարձնել մատուցված նյութի ընկալումը:

Սույն հոդվածը նվիրված է “Let’s Translate” ձեռնարկի այն բաժնին, որն ուսումնասիրում է դարձվածային միավորների, առած-ասացվածքների թարգմանական խնդիրներին, որը մեր կարծիքով որոշակի դժվարություններ է առաջացնում սկսնակ թարգմանչի համար:

Ինչպես արդեն վերը նշվեց, տվյալ ձեռնարկի այս բաժինները (*Դարձվածքները և նրանց թարգմանությունը, Ասացվածքների և առածների թարգմանությունը*) ունեն տեսական, բացատրական հատված, որտեղ համառոտ տրված է դարձվածքների, առած-ասացվածքների սահմանումները: Առանձին պարբերությամբ ներկայացված են թարգմանիչների կողմից սահմանված կանոնները, որոնք կօգնեն ուսանողին ճանաչել (հայտնաբերել) տեքստում դարձվածային միավորները: Բերենք կանոններից օրինակներ՝

- *Եթե տեքստում հայտնվում է արտահայտություն, որը տրամաբանորեն հակասում է համատեքստին, ապա այն հարկավոր է դիտարկել որպես հնարավոր դարձվածք:*

- *Հարկավոր է վերլուծել դարձվածքների խոսքային գործոնները: Օրինակ՝ բառացի և փոխաբերական իմաստի միջև բախումը հաճախ օգտագործվում է հեղինակի կողմից այլ ոճաբանական երանգ ստեղծելու նպատակով:*

- *Այն առածներն ու ասացվածքները, որոնք հապուկ են ժողովուրդների լեզվամտածողությանը և արտահայտում են մարդկային համընդհանուր երևույթներ, թարգմանվում են թիրախ լեզվի համար համարժեք առածներով և ասացվածքներով: Ակնհայտ է, որ այս թարգմանությունները ոչ միայն չեն տուժում, այլև հնչում են բնագրին հավասար մակարդակով՝ հարազատ ու մատչելի ընթերցողին:*

▪ Կան առածներ ու ասացվածքներ, որոնք առանձնահատուկ են տրվյալ լեզվի համար, կապված են նրա յուրօրինակ լեզվամտածողությանը և իրենց համարժեքները չունեն այլ լեզուներում: Այսպիսի առածներն ու ասացվածքները թարգմանելիս չպետք է մայրենի լեզվով ստեղծել բովանդակությամբ մոտ զուգահեռ ձևեր և օգտագործել դրանք: Թարգմանության այս եղանակը հնարավորություն է տալիս պահպանել բնագրի լեզվի և ժողովրդական լեզվամտածողության առանձնահատուկ երանգը, շատ չհեռանալ բովանդակությունից, պահպանել բնագրի համարժեքությունը:

Տեսական վերլուծությանը նվիրված հատվածում առաջարկել ենք դարձվածքների, առած-ասացվածքների թարգմանության կանոնները, այսինքն՝ թարգմանական հնարները, այն եղանակների կիրառումը, որը կապահովի թարգմանության համարժեքությունը: Դարձվածքների և ասացվածքների թարգմանության համար առաջարկվել են օրինակ հետևյալ եղանակները՝

ա) *զուգահեռ համարժեքով՝*

sword of Damocles – Դամոկլյան սուր

First think, then speak – Առաջ մտածիր, հետո խոսիր:

Eagles don't catch flies. – Արծիվը ճանճ չի բռնի:

բ) *սովորական պատճենմամբ՝*

to kill time – ժամանակ սպանել

All that glitters is not gold. – Ամեն պսպղացող ոսկի չէ:

Appetite comes with eating. – Ախորժակը ուտելիս է բացվում:

գ) *դարձվածքային (ասացվածքային, առածային) համարանությամբ՝*

Make hay while the sun shines – Երկաթը տաք-տաք ծեծել:

Let bygones be bygones. – Անցյալը անցած է:

Every bird likes its own nest. – Ամեն մարդ իր լավաշին է տեղ անում:

դ) *դիպվածային պատճենմամբ՝*

blue stockings – «կապույտ գուլպա»

My house is my castle. – Իմ տունն իմ ամրոցն է:

A hungry belly has no ears. – Սոված փորն ականջ չունի:

ե) *ազատ բառակապակցությամբ (նախադասությամբ)*

eat humble pie – նվաստացման ենթարկել

Love is neither bought nor sold – Սերը առ ու ծախսի ենթակա չէ:

The mill cannot grind with the water that is past. – Անցածը ետ չես բերի:

զ) *նկարագրական արտահայտությամբ*

mouse potato – ամբողջ օրը համակարգչի առջև անցկացնող մարդ

է) *մենաբառոյթով*

lady's/ladies' man – կնամուլ

ը) *առածով/ ասացվածքով*

Like parents, like children.-Ինչպիսին ծառն է, այնպես էլ պտուղն է:

Every bullet has its billet.-Լինելիքից չես փախչի:

Տեսական նյութին հաջորդում են գործնական վերլուծությունները, որոնք ամրապնդում են տեսական հատվածից ստացած գիտելիքները:

Նախատեսված են թարգմանական բնույթի վարժություններ, որոնք նպաստում են թարգմանական հմտությունների զարգացմանը: Վարժություններ են առաջարկվում՝ գտնելու (ճանաչելու) այս կամ այն դարձվածքը կամ ասացվածքը տեքստում և ապա թարգմանելու:

Օրինակ՝

*Թարգմանել դարձվածք պարունակող հետևյալ նախադասությունները:*

1. Երեկ արդեն մի խանութ կտրել-թալանել են, և իշխանությունը լոկ ականատես է եղել, մատը մատին չի խփել:

2. Ոչ մի կասկած չկա, որ այսօրվա ուսանողը մեր ժամանակվա ուսանողից մի գլուխ բարձր պետք է լինի:

3. Երբ համբերության բաժակը լցվեց, հայրը խիստ պատժեց որդուն:

Օրինակ՝

*Թարգմանել:*

1. He had to keep a sharp eye on his sister for the sake of her good.

2. The woman obviously had the gift of second sight, whatever it might be.

3. He had been a rolling stone too long to sit down in one place, breed cattle and wait for them to grow.

4. My uncle was a rich man – in other word, he paid the piper.

Ասացվածքներին վերաբերող վարժություններն ունեն հետևյալ պահանջները՝

Օրինակ՝

*Անգլերենում գտնել հետևյալ հայերեն ասացվածքների համարժեքները և վերլուծել միջլեզվական և միջմշակութային տարբերությունները:*

1. *Տան աղբը դուրս չեն հանի:*

2. *Կարմիր կովն իր կաշվից դուրս չի գա:*

3. *Ամեն մարդ իր լավաշին է տեղ անում:*

Օրինակ՝

*Գտնել հետևյալ ասացվածքների հայերեն համարժեքները:*

1. A bird in the hand is worth two in the bush.
2. A burnt child dreads the fire.
3. A rolling stone gathers no moss.

Օրինակ՝

*Գտնել նախադասություններում ասացվածքները: Թարգմանել:*

1. Don't burn bridges. You'll be surprised how many times you have to cross the same river.
2. When asked the key to his success, he said, "In land of blind the one-eyed man is king".
3. I'm trying to teach my husband that life is not all beer, skittles and football.

Հաջորդ վարժություններն արդեն նպատակաուղղված են ոչ միայն ճանաչելու դարձվածքը (ասացվածքը, առածը) տեքստում, այլև *որոշելու վերջիններիս թարգմանության եղանակը:*

Օրինակ՝

1. I shall stay up for it, and keep my eyes open.

Կմնամ վաղն էլ այդ երեկոյթին և ականջս սրած կպահեմ:

2. It's quite true that English painting has no wisdom teeth.

Առհասարակ ճիշտ է, որ անգլիական նկարչությունը դեռ իմաստության ատամներ չի հանել:

3. ...He stopped in time, and substituted: "Do you mean that we've got to sit down under it?"

...նա ժամանակին կանգ առավ ու խոսքը փոխեց:- Ուզում եք ասել՝ պետք պետք է կու՛լ տանք այս բանը:

Ձեռնարկի այս բաժինն ընդգրկել է նաև հետևյալ պահանջ ունեցող վարժություններ:

Օրինակ՝

*Հետևյալ նախադասություններում գտնել թևավոր խոսքերի անգլերեն համարժեքները. Թարգմանել նախադասությունները և բացատրել դարձվածքների իմաստը համատեքստում:*

1. Գործը ատյանից ատյան էր անցնում և դատարանի ու վարչական իշխանությունների մեջ *կռվախնձոր էր դարձել:*

2. Ես հրավիրված էի մի ընտանեկան երեկոյթի: Այնտեղ վկա եղա *բարելոնյան քառսին:*

3. Սրա *առյուծի բաժինը* տանում էին օր օրի աճող, այսպես կոչված, հատորային գրականության հեղինակները:

*Թարգմանել հետևյալ մշակութային իրոյթներ պարունակող դարձվածային միավորներով նախադասությունները:*

1. I just want to get the hell out of this black hole of Calcutta.
2. Spring has been playing Box and Cox with winter for months past.
3. It looks like to we have got another *John Doe* in this case.

Ասացվածքների վերաբերյալ տրված են հետևյալ պահանջ ունեցող նմանատիպ վարժություններ՝

Օրինակ՝

*Անգլերենում գտնել հետևյալ ասացվածքների համարժեքները:*

1. Ով համբերում է, նրան բախտն էլ ժպտում է:
2. Ձուկ բռնողը ջրից չի վախենա:
3. Հույսը որ չլինի մարդ իրեն քարափից վայր կգցի:

Այսպիսով, նմանատիպ վարժությունները ստուգում են ուսանողի

ա) դարձվածքի իմացությունը թե՛ հայերեն և թե՛ անգլերեն լեզվամշակույթներում,

բ) թարգմանական հմտությունը:

Ուսանողները հետաքրքրված են հետևյալ տիպի վարժություններով՝

Օրինակ՝

*Համեմատել անգլերեն և հայերեն դարձվածային միավորները՝ ընտրել և համապատասխանեցնել և որոշել նրանց տարբերությունները:*

- blow hot and cold (about smth)
- couch potato
- from the (bottom of one's) heart
- have smb. in one's pocket
- kill two birds with one stone
- once in a while
- run with the hare and hunt with the hounds
- there is no help for it
- walking dictionary
- safe and sound
- երբեմն, մեկ-մեկ
- հեռուստամոլ
- մեկին բռի մեջ պահել
- մի գնդակով երկու նապաստակ խփել
- տատանվել, իր կարծիքը՝ վերաբերմունքը անընդհատ փոխել
- և՛ պայտին խփել, և՛ մեխին
- ամբողջ ոգով՝ սրտով, ի սրտե

- ողջ-առողջ
- կենդանի հանրագիտարան
- հեշ արած, ոչինչ չես կարող անել

Այս վարժությունը ստուգում է թե՛ անգլերեն և թե՛ հայերեն դարձվածքների *իմաստային* կաղապարների վերաբերյալ ուսանողի գիտելիքները և միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս գտնել թարգմանական տարբեր *եղանակներ* և որոշել արդյոք բոլոր օրինակներում է պահպանվել *համարժեքությունը*:

Ձեռնարկում ընդգրկվել է նաև վարժության մի տեսակ, որն ունի հետևյալ պահանջը՝

*Օրինակ՝*

*Համեմատել աստվածաշնչյան ծագում ունեցող դարձվածքները հայերեն դարձվածքային միավորների հետ: Թարգմանել նախադասությունները:*

1. They condemned her unanimously and each every crawled forward *to cast the first stone*, lest if might be thought that there was even one among them not without sin.
2. Իմ խոսքերի մեջ ամենափոքր ցանկություն անգամ չկա *քար նետելու* երիտասարդ սերնդի վրա:
3. The teacher *searched his heart* trying to decide if he had been unfair in failing Tom.
4. Աչքերը մարդու հոգու հայելին են: Ահա այդպես էլ *նայում ես* նրա *հոգուն*, որոշում, թե ինչ մարդ է կանգնած քո դիմաց:

Այս վարժությունն ընդգրկում է և՛ հայերեն, և՛ անգլերեն նախադասություններ, որոնցում կիրառվել է նույն աստվածաշնչյան դարձվածքային միավորը: Ուսանողը թարգմանելիս անգլերենից հայերեն և հայերենից անգլերեն համեմատում է համատեքստերը և տվյալ դարձվածքի կիրառությունը այդ նախադասություններում, ինչպես նաև որոշում է համարժեքության աստիճանը: Նմանատիպ վարժության պահանջը ենթադրում է ոչ միայն օտար, այլև մայրենի լեզվի գերազանց իմացություն և համապատասխան գիտելիքների խորացում:

Այսպիսով, մասնագիտական բաժնում սովորող ուսանողները, ճանաչելով, վերլուծելով և թարգմանելով անգլերենի և հայերենի դարձվածքային միավորները և առած-ասացվածքները հարստացնում են իրենց բառապաշարը, զարգացնում են իրենց լեզվամշակութային գիտելիքները, բարելավում թարգմանական հմտությունները:



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Harutyunyan N., Hakobyan N. Let's Translate. Yerevan: "Interlingua" Linguistic University, 2006.
2. Նազարյան Ա., Բաղդասարյան Լ. Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երևան, Ամարաս, 2000:

**Н. АКОПЯН – Выявление переводческих проблем фразеологических единиц, пословиц и поговорок на курсах профессионального английского языка.** – В данной статье делается попытка описания роли фразеологизмов, пословиц и поговорок в языке и выявления их лингвокультурной ценности. Данный языковой материал часто вызывает трудности у переводчиков и может приводить к семантическому несоответствию в языке-источнике. Соответственно в рамках курса профессионального английского языка особое внимание было уделено развитию переводческих навыков студентов. Использование определенных упражнений во время обучения способствовало развитию не только профессиональных навыков, но и обогащению лексического запаса студентов и развитию их знаний в области лингвокультуры.

**Ключевые слова:** фразеологический оборот, пословица, поговорка, носитель языка, лингвокультурная особенность, коннотативное значение, стилистическая окраска, переводческая трансформация, калька, аналог, эквивалентность

**N. HAKOBYAN – On the Translation Problems of Phraseological Units, Proverbs and Sayings at Professional English Courses.** – The paper is an attempt to describe the important role of phraseological units, proverbs and sayings in a language and to reveal their linguocultural peculiarities. The language material under study often causes difficulties for translators which may result in semantic inadequacy in a target language. A number of exercises, used in the learning process, are aimed at improving interpreting skills, enriching the learner's vocabulary and developing linguocultural knowledge.

**Key words:** phraseological unit, proverb, saying, native speaker, linguocultural peculiarity, connotational meaning, stylistic colouring, calque, analogue, translation transformation, equivalence

Ներկայացվել է՝ 1.04.2019  
Երաշխավորվել է ԵՊԼՀ Մանկավարժության և լեզուների  
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից  
Ընդունվել է տպագրության՝ 25.04.2019